№ 244 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

Հայկանոյշ Գրիգորեան, Ռոսսում Աւագեան Մարտիրոսեանցները և իրանց որդիներ՝ Լևոնն ու Ռուբէնը, անկարող լինելով անձամբ շնորհակալութիւն յայտնել բոլոր նրանց, որոնք ցաւակցութիւն են յայտնել իրանց՝ Մարտիրոսեանցներին հասած ծանր վշտի պատճառով և խորին զգացմունքներով ջերմ յարգանք են մատուցել թէ անձամբ և թէ հեռագիրներով ու նամակներով՝ առաջիններին անմոռանալի և թանդագին դստեր, վերջինների թանկագին և սիրելի քրոջ՝ I գիմնազիայի VII դասարանի աշակերտուհի

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

յիշատակին, սրանով յայտնում են իրանց սրտագին և խորին շնորհակալութիւնը այն բոլոր հասարակական հիմնարկութիւններին, անձերին և ընկերուհիներին, որոնք յարգել են հանգուցեալի յիշատակը:

1194. 1—1

Հինգշաբթի, նոյեմբերի 5-ին
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Տեղի կունենայ

Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՊԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Վարչութեան տեղեկագիրը ամարային գործունէութեան մասին.
2) Զեկուցում «Ալպիական անտառութեան մասին»—կանի Ալ. Քալանթար.
3) «Զեմստվոների գիւղատնտեսական գործունէութիւնը—Ա. Աթանասեան.
4) Ընթացիկ հարցեր.

Ժողովում ցոյց կը տրվեն լեռնային շրջանում բուծած կարտոֆելի ժողովածու:
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:
Ներկայ կարող են լինել նաև կողմնակի անձինք:

(Ե. Չ. Հ.) (առ.) 1190. 3—2

Սրանով յայտնվում է ի տեղեկութիւն յարգելի հասարակութեան, որ Աղնւականների Հողային Բանկի սեփականութիւն հանդիսացած

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵԲԱՂԱՆԻՔԸ (ՆԱԽԿԻՆ ԱԲՕՑԵՎԻ)

Պեսկովսկայա փող. վրա, Առևտրական Դպրոցի դիմաց

Բացված է: Կան համարներ՝ էլեքտր. լուսաւորութեամբ—ընդհանուրի և աղնւականների համար, նոյնպէս և սովորական՝ կանանց, տղամարդկանց և զինուորների համար: Յանկացողներին տրվում են աբօնեմենտներ՝ դիմումով: Բաղանիքը բաց է առաւ. ժամը 6-ից մինչև գիշ. ժամը 12-ը: Տէլէֆօն № 718.

(ա. օ. (առ.) 1177. 5—4

Երդուեալ-հաւատարմատարի
օգնական
Աղէքսանդր Պապովեանը
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
Вельяминовская ул., № 30.
(ա. օ.) (առ.) 1121. 10—10

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԸ

Պարսկական պարլամենտը բացվեց և սկսում է գործել:

Ինչպէս կը գործէ այդ պարլամենտը՝ մենք չը գիտենք, բայց մի բան պէտք է համարել պարզված Պարսկաստանի համար, որ որքան էլ այդ երկիրը համարվի յետամնաց և նահապետական, այնուամենայնիւ նրա ժողովրդի մէջ գոյացել է հաստատ տրամադրութիւն այլ ևս չը վերադառնալ միահեծան կառավարութեան և վարել պետական գործերը սահմանադրական կարգերով:

Պարսկական ներկայ պարլամենտի դիրքը տարբերվում է նախկին պարլամենտի դիրքից:

Առաջին պարլամենտը, որ յետոյ վերացվեց, շնորհված էր ժողովրդին, երբ այդ ժողովրդի մեծագոյն մասը դեռ պարզ գաղափար չունէր սահմանադրական կարգերի էութեան ու նշանակութեան մասին:

Բայց այնուհետև շատ բան փոխվեց Պարսկաստանում և մտքերի մէջ կատարվեցին մեծ յեղաշրջումներ:

Այն արտասովոր եղելութիւնները, որոնք տեղի ունեցան առաջին պարլամենտի բացումից յետոյ, այնպիսի լայնատարած յուզմունքներ առաջ բերին Պարսկաստանի զանազան մասերում և այնպիսի բազմատեսակ լուրեր առաջացրին պարսկական իրականութեան ազդեցիկ տարրերի մէջ, որ պետական կարգերի խնդիրը դարձաւ հանրային ժամանակագրութեան առարկայ ժողովրդի ընդարձակ խաւերում և հանդիսացաւ իբրև ժողովրդական պահանջի արտայայտութիւն:

Ճիշդ է՝ Պարսկաստանի դարերով ճնշված և տրկացած ժողովուրդը դեռ անկարող է բոլորովին գիտակցօրէն վերաբերվել իր զարգացման վերաբերեալ բոլոր խնդիրներին, բայց նա մի բանի մէջ համոզված է հաստատապէս, որ այլ ևս հին պետական կարգը չէ համապատասխանում Պարսկաստանի արդի պահանջներին և որ եթէ կայ այսուհետև փրկութիւն երկրի հաղթամեայ այդ պետութեան համար, դա սահմանադրական կարգերի հաստատման մէջն է, ժողովրդի բոլոր գործադիր ոյժերի համախմբված պետական գործունէութեան մէջ:

Պարսիկ ժողովուրդը, իւրացնելով սահմանադրական տրամադրութիւն, այժմ կարօտ է ձեռնհաս սահմանադրական գործողների:

Դրանց թիւը քիչ է:

Այդ պատճառով նա պէտք է առանձնապէս գնահատի այն ոյժերը, որոնք կան պարսկական իրականութեան մէջ, կոչելով նրանց գործի. միւս կողմից ուղարկի ընդունակ երիտասարդներին եւրոպական երկիրները՝ ծանօթանալու պետական գործունէութեան այս ու այն ճիւղի հետ՝ և առանձին ուշադրութիւն դարձնի եւրոպական կրթութեան ներմուծման վրա Պարսկաստանում:

Պարսիկ ժողովուրդը աշխատասէր և խելացի տարր է: Եթէ տրվում են զարգացման յարմարութիւններ, նա կարճ միջոցում կը կազմակերպվի իբրև գործօն տարր պետական առաջադէմ գործունէութեան համար:

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիդնէյ, 2 նոյեմբերի

Հանքերի բանւորների միութեան և ուրիշ արհեստակցական դաշնակցութիւնների կօնֆերէնցիայում վճռվեց բոլոր օրինական միջոցներով գումարել տալ հանքատէրերի և լեռնային բանւորների հրապարակական կօնֆերէնցիա: Անաջողութեան դէպքում արհեստակցական միութիւնները դիմելու են կառավարութեանը՝ առաջարկելով լեռնային ձեռնարկութիւնները յանձնել պետութեան: Բոլոր միութիւնները ձեռք են առել նախնական միջոցներ գործադրելի համար: (Հ. Գ.)

Սինգապուր, 2 նոյեմբերի

Երէկ առաւօտեան անգլիական «Օնդա» շոգենաւը ընդհարվեց «Լադէյն» պօստային նաւի հետ: Վերջինս ընդհարումից երկու բօպէ յետոյ խորասուզվեց Ջրում: «Օնդան» ազատեց 61 ճանապարհորդների և նրանց հետ վերադարձաւ Սինգապուր: Խեղդվեցին 7 եւրօպացիներ, նաւի կապիտանը, 5 օֆիցէրներ և 88 տեղացիներ: Շատ օֆիցէրներ և 88 տեղացիներ: Շատ մարդկանց ջրի մէջ կուլ տուին շնաձկները: (Հ. Գ.)

Բուդապէշտ, 2 նոյեմբերի

Վիեննայի և Կօշուտի ազգայնականների թագաւորի հետ վերջնական վճռի չը յանգեց: Ճգնաժամը լուծելու բանակցութիւնները շարունակվում են:

«Պեստէր-Լլոյդը» հաղորդում է, որ կայսրը համաձայն չէ զիջումներ անել զօրքի նկատմամբ: (Հ. Գ.)

Վիեննա, 2 նոյեմբերի

«Կօր. Բիւրօյին» հեռագրում են Սալոնիկից, որ դէպի յունական սահմանագլուխն են մեկնում չորս բատալիոն հետեւակ և նրվու լեռնային բատարէաներ յունական հրոսակախմբերի մուտքը սահմանից արգելելու համար: (Հ. Գ.)

Պարիզ, 27 հոկտեմբերի

Այստեղի դիպլոմատիական շրջանակներում յամառ լուր է պտտում, որ յունաց թագաւորը շուտով հրաժարվելու է գահից: Ճգնաժամի սկսվելու օրից թագաւորը լաճախակի ցանկութիւն է յայտնել հեռանալ Յունաստանից, բայց զիջել է բարեկամ պետութիւնների խնդիրներին և յորդորներին: Ազգական և բարեկամ թագաւորները վերջին փորձերն են անում համոզելու թագաւորին, որ մնայ գահի վրա, բայց հազիւ թէ այդ փորձերը աջողութեամբ պսակվեն. թագաւորի գահից հրաժարվելու գլխաւոր դրդիչ պատճառը այն համոզմունքն է, որ իր զինաստիայի շահերը, մինոյն է, չէ կարելի փրկել, որովհետև գահաժառանգի համար անհնարին կը լինի իր ուսերի վրա կրել քաղաքական այն ծանր թիւնը, որ նա կը ստանայ: («Բ. Բ.»)

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 2 նոյեմբերի

Շահի ներկայութեամբ օրինակելի կարգով բացվեց մէջլիսը գահական ճառով, որ կարդաց մինիստրների խորհրդի նախագահ Սիպէհդարը:

Երեկոյեան տեղի կունենայ հրաւառութիւն:

Թիւրքաց դեսպանատանը բաստնատած նախկին սադրազամը և ֆինանսների մինիստրը հեռացան դեսպանատնից, վճարելով անհրաժեշտ գումար պետական գանձարանին: (Հ. Գ.)

Նոր տեղեկութիւններ Արդաբիլի դրութեան մասին չեն ստացված արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

Պարսկական գործերի հետ իր պաշտօնական դիրքով լաւ ծանօթ մի անձն մեր աշխատակցին հաղորդեց հետևեալը.

«Եթէ շահսէվանները իսկապէս ցանկութիւն ունենային վերականգնել գահաղուրկ շահի իրաւունքները, նրանք ամենից առաջ հոգ կը տանէին այն բանի մասին, որ իրանց դէմ չը դրգռեն խաղաղ ազգաբնակութիւնը և իրանց ճանապարհին չէին կողոպտի և չէին կոտորի մարդկանց:

«Շատ կարելի է, որ այն ժամանակ Արդաբիլում նրանց դիմաւորէին որպէս գաղափարական մարանչողների և դիմադրութիւն չէին ցոյց տայ նրանց:

«Շահսէվանների արշաւանքը աջողութիւն կարող էր ունենալ միայն այն դէպքերում, եթէ նրանք առաջ ընթանային որպէս լաւ ամրողջ հիւսիսով, կանգ չառնելով այնպիսի մանր քաղաքներում, որպէս Արդաբիլն է, այլ փորձէին իրանց ձեռքը դցել այնպիսի կենտրօն, որպիսին Թաւրիզն է: Այն ժամանակ ամբողջ Ատրպատականը նրանց ձեռքում կը լինէր, մանաւանդ որ Բահիմ-խանը բուն զարաղցի է և արդէն իր զինւորական ընդունակութիւնները ցոյց տուեց գարնանը, Թաւրիզը պաշարելու ժամանակ, ուր նրա զօրքերն ահագին վնաս էին հասցնում քաղաքի պաշտպաններին: Եթէ Էյն-ուլ-Դովլէն մի փոքր օգնութիւն ցոյց տար նրան, հանգամանքները այլ կերպ կը դասաւորվէին:

«Դրութիւնը Արդաբիլում այս բօպէիս այսպէս է. քաղաքը կողոպտված է և վնասվել է հրդեհից: Մօտ 2000 քաղաքացիներ ապաստանվեցին ռուսաց հիւպատոսարանում և ռուսահպատակ վաճառականների տանը: Մնացած ազգաբնակութիւնը թաղնված է մզկիթներում և այլ տեղերում:

«Պարսից կառավարութիւնը զօրքեր ուղարկեց Թէհրանից, որոնք կարող են հասնել այնտեղ երեք շաբաթից յետոյ, և հրաման արձակեց մի զօրաբաժին ուղարկել Թաւրիզից, բայց միևնոյն ժամանակ մոռացաւ փոշ ուղարկել. իսկ առանց փոշի հազիւ թէ Թաւրիզի զօրաբաժինը շարժվի տեղից»: («Բ. Բ.»)

Փոխ-հիւպատոս Գիրսից ստացված տեղեկութիւնները հաստատում են, որ շահսեվանները չեն համարձակվել յարձակում գործել հիւպատոսարանի շրջանակի վրա:

Շատ դժուարութեամբ են ստացվում տեղեկութիւններ Արդաբիլից: Սակայն են լինում բոլոր հեռագիրները Աստարա ուղարկել, որտեղից նրանք հաղորդվում են հեռագրով:

Գիրսը մեծ գովասանքով է խօսում հիւպատոսարանի փոքրաթիւ պահակախմբի մասին, որը անասելի աշխատանքներ է կրում:

Կողոպտված են ռուսահպատակների շատներ և առևտրական պահեստներ: Ի հարկէ շահսէվանները պարտաւոր են վճարել ռուսահպատակների վնասները: («Բ. Բ.»)

Թաւրիզ, 26 հոկտեմբերի

Թաւրիզի վաճառականները և ռուսահպատակները ուրախութեամբ ողջունում են ռուսաց զօրքերի հասնելը Արդաբիլ, յուսալով որ շահսէվանների և դարաղցիների ասպատակութիւններից ու կողոպուտներից կազատվին:

Բահիմ խանի հետ բանակցութիւնների համար ուղարկված Բէշիդ-ուլ-Միւլքից տեղեկութիւններ են ստացված, որ Բահիմ խանը դիմաւորութիւն ունի շահսէվանների հետ միասին արշաւել Թէհրանի վրա սահմանադրութիւնը տրամատիլ անելու համար: («Բ. Բ.»)

## ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ Ա.ԶԳ. ԺՈՂՈՎԻ ՀՈԿՏ. 16-Ի ՆԻՍՏԸ

Ազգային երեսփ. ժողովը երէկ խիստ յուզումնալից ու նշանակալից նիստ մը ըրաւ կարուկ հարուածով մը ջախջախելով Շահրիկեանի դիկտատորութիւնը, որ դեռ վերջին վայրկեանին իսկ կը յամառէր չձգել ազգին օձիքը:

Առեանը բացուեցաւ 74 երեսփոխաններու ներկայութեան: Մայր դիւանի պաշտօնավարութեան շրջանը աւարտած ըլլալով Զերազ էֆ. յայտնեց, թէ դիւանը կը հրաժարի: Ժողովականները խնդրեցին մայր դիւանէն, որպէս զի կրկին շարունակէ իր պաշտօնը, սակայն դիւանը խստիւ մերժեց պաշտօնը: Ապա ընտրութիւնը: Ժողովը իր ընդունելի վերընտրութիւնը՝ Գորեան էֆ. ատենադրիցգոյն անդամը՝ Թէքէեան էֆ. ատենապետ և կրտսերագոյնը՝ Թէքէեան էֆ. ատենադպիր կարգեց առժամապէս: Յետոյ ձեռնարկեցաւ մայր դիւանի ընտրութեան. 78 երեսփոխաններէն երկուքը ձեռնպահ մնացին, իսկ մնացեալ 76-ին 46 քուէովը ազգային ժողովի ատենապետ ընտրուեցաւ գնդապետ զօր. Տիգրան բէյ Աճէմեան: Իսկ Բ. և Գ. ատենապետներուն ընտրութիւնը յաջորդ նիստին յետաձգուեցաւ: Յետոյ ընտրուեցաւ դիւանադպրի ընտրութեան և Վահան էֆ. Թէքէեան 69, Սարգիս էֆ. Սուին 63, և Օտեան էֆ. 35 քուէով ատենադպիր ընտրուեցան: Գորեան էֆ. շնորհակալութիւն յայտնեց հրաժարեալ մայր դիւանին, որ կրցաւ սահմանադրական օրէնքին գծած սահմանէն չչեղել և բարէնքին գծած սահմանէն չչեղել և բարէնքին գծած սահմանէն չչեղել և բարեհաւատ կերպով վարել իր պաշտօնը: Յետոյ հրաւիրեց դիւանը որ դայ իր տեղը բազմի:

Աճէմեան բէյ իր նախորդին շնորհակալութիւն յայտնելէ յետոյ՝ շնորհակալութիւն յայտնեց նաև ժողովին, իրեն ընծայած վստահութեանը համար, և ըսաւ.

— Պայմանով մը միայն կընդունիմ երեսփ. ժողովի ատենապետութիւնը: Տարուան մը պաշտօնավարութեանս մէջ փորձով տեսայ, որ որոշուած ժամուն շատ քիչ թուով երեսփոխաններ ներկայ կը գտնուին և ժողովը ամլութեան կը դատապարտուի ժամերով: Ես ազայութենէս զինուորական կեանք վարած եմ և միշտ սորված եմ կարգապահութիւնը յարգել. հետևաբար որքան ուրիշ ժամուն պիտի բանամ ժողովը և ըստ օրէնքի ժամ մը դիւանական գործողութիւններով զբաղելէ ետք՝ պիտի անցնիմ օրակարգին:

Ժողովը ծափերով ընդունեց այս խօսքերը:

Յետոյ կարդացուեցան Բ. Դրան հետ ցեղակցութիւն կատարելու պաշտօն ունեցող հրաժարեալ անդամներուն գիրերը, ուրկէ վերջ վիճաբանութիւնները սկսան սուրկէ վերջ վիճաբանութիւնները սկսան սուրխնդրին վրայ թէ՝ ո՞վ պիտի վարէ Բ. Դրան հետ բանակցութիւնները: Թեր ու դէմ վիճաբանութիւններէ ետք խնդիրը առախ մնաց և ընդհանուր ժողովի փափաքին վրայ անցաւ քաղ. ժողովի հրաժարագրին: Նախ կարդացուեցաւ հաւաքական հրաժարագիրը զոր ստորագրած էին քաղ. ժողովին 6 անդամները:

Յետոյ կարդացուեցաւ Միհրան Հ. Շիրինեանի հոկտ. 8 թուակիր հրաժարականը, որով կըսէր, թէ, քանի որ մամուլը, որով կըսէր, թէ, քանի որ մամուլը, ազգը և ընդհ. ժողովը վստահութիւն չունի քաղ. ժողովին վրայ, պէտք է անմիջապէս հրաժարիլ, և այս պատճառով ինք կը հրաժարէր:

Կարդացուեցաւ նաև Յարութիւն էֆ. Յովհաննիսեանի հրաժարագիրը և հուսկ ուրեմն դիւանին վրայ եկաւ Յարութիւն Շահրիկեանի 13 ընդարձակ էջնոց մէկ գրութիւնը, որուն կարելի չէր անուն մը տալ, քանի որ խմբովին տրուած հրաժարականին տակ ստորագրած էր արդէն և ասիկայ ալ յաւելուածական բան մը էր:

Ժողովը, որ արդէն զզուանք կը զգար Շահրիկեանի անունէն, 13 էջնոց անոր մէկ գրութիւնը տեսնելուն պէս սկսաւ միահամուռ բողոքի. քառորդի մը չափ ծանր մուռ բողոքի. քառորդի մը չափ ծանր ժխոր մը պատեց ժողովասրահը: Շահրիկեան սակաւաթիւ խմբակը կը պնդէր, որ անպատճառ կարդացուի, իսկ ժողովը անպատճառ կը մերժէր կարդացուիլը: Վերջապէս առենադպիրը կարճ կապելու համար սկսաւ կարդալ: Աւելորդ է ըսել, թէ, Շահրիկեանի բոլոր գրութիւններուն նման, այս գրութիւնն ալ ուրիշ բան չէր պարունակեր, բայց միայն նախատինք, լուտանք, զրպարտութիւն ու բամբասանք դէմը եղողին հասցէին: Երեսփոխան չկար որ ոչէ տեսակէտ մը նախատանքին ենթակայ եղած չըլլար այս բամբասող պառաւին: Երեսփոխանները իրենց զզուանքը արտայայտելու համար խմբովին դուրս ելան պահ մը, և սրահ մնացողները շարունակեցին ունկնդրել այս գլխացաւին. պահ մը այն սատիճանի հասաւ Շահրիկեանի պառաւական զրախօսութիւնը, որ ատենապետ բէյը, չկրնալով հանդուրժել, ժողովին ընդհանուր փափաքին վրայ դադրեցուց նամակին ընթերցումը, յայտարարելով թէ այս լեզուով ու այս ոճով գրուած թուղթ մը չի կրնար կարդացուիլ երեսփ. ժողովի բեմէն: Շահրիկեան խմբակը կրկին գործի սկսաւ. իսկ վարպետը աթոռը կորսընցնող դիկտատորի մը դայրութիւնով շարունակ դիւանին վրայ կը յարձակէր՝ «Դիւանը իր խօսքը պէտք է ետ առնի» պոռալով, որուն կը ձայնակցէին իր աշակերտները ամէնքներով: Վերջապէս կարդացուեցաւ լուտանքներու բառարանը և ժողովականները շունչ մը առին:

Զերազ էֆ. խօսք առնելով ըսաւ.

— Ոչէ մարմին իրաւունք ունի հրաժարական տալու, բայց ինքնիրաւունք չունի ուրիշի մը ակնարկութիւններ ընելու: Քաղ. ժողովը իր հրաժարականը կը հիմնէ սա կէտին վրայ, թէ, սահմանադրութեան հակառակ ըլլալով ատենապետաց ժողովին եղբակցութիւնը, անոր համար կը հրաժարի. կը մոռնայ որ այդ առաջարկը քուէարկուեցաւ: Ասկէ զատ սահմանադրութեան անունով այսչափ յոխորտացող քաղ. ժողովը ինչպէս կրցաւ ինքը ստանձնել կառավարութեան հետ բանակցելու գործը, երբ սահմանադրութիւնը բացորոշ կերպով կըսէ թէ ազգին ու սէրութեան մէջ միակ միջնորդը պարիարքն է. և երկրորդ՝ սահմանադրութեան հաւատարիմ այդ ժողովը ինչպէս կրցաւ ս. պատրիարքին «հրաժարէ» ըսել և հրաժարեցնել, մինչդեռ ինք ազգին իր հրաժարականը կը շարունակէ խղճի հանդարտաշտութեամբ: Հետևաբար կառաջարկեմ քաղ. ժողովին հրաժարականն ընդունիլ իբր պարզ հրաժարական, մերժելով պատճառաբանութիւնները:

Վերջապէս երկար վիճաբանութիւններէ ետք քուէի դրուեցաւ Զերազ էֆ.-ի առաջարկը. այսինքն քաղ. ժողովի հրաժարականը:

## ԴՎԿՎՃՎՍՈՅՏ ԴՎԿՃՅԴՅ

III

### ՀԱՅՈՒՄ ԿՈ ՀԱԺՏՄ

Մի քանի դար հետո Եվրոպան ինքնագոհ ասում է, թե Հայաստանը ինչպես ամբողջապես ենթարկվեց Թուրքիային, ինչպես ամբողջ ազգը ոչնչացվեց, ինչպես ամբողջ հայ ժողովուրդը դարերի ընթացքում ենթարկվեց ստրկության, ինչպես ամբողջ հայ ազգը դարձավ ստրուկ, ինչպես ամբողջ հայ ազգը ենթարկվեց ամենաանարգ, ամենաանասելի հալածանքների

նը, որ կատարված էր 20,000 օրինակով։ Հեմարանը պատրաստում է նոր, աւելի ճոխացրած և լրացրած հրատարակութիւն, որ լոյս պիտի տեսնէր բանաստեղծի մահվան օրաթուին՝ հոկտեմբերի 29-ին։

✦ Բրօկհաուզ և Եֆրոն լայտնի հրատարակչական ֆիրման ձեռնարկում է մեծ էնցիկլոպեդիական (հանրագիտական) բառարանի երկրորդ հրատարակութեան։ Յայտնի է, որ այդ բառարանի առաջին հրատարակութիւնը, որ ձգձգվեց ամբողջ քսան տարի, բաղկացած էր 86 հատորից, ամեն մի հատորը առանց ճանապարհածախսի՝ 3 ր.։ Մի այդպիսի մեծ ծաւալ նա ստացել էր շնորհիւ այն հանգամանքի, որ բառարանում զետեղված էին չափից դուրս մասնագիտական յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերից և այնպէս գրված, որ նրանցից օգտվել կարող էին մասնագետները։

Այժմ նոր խմբագրութիւնը վճռել է դէն ձգել այդ բաժինները և հրատարակութիւնը ամփոփել 45 հատորի մէջ, իսկ գործը վերջացնել 5—6 տարում, որ ունի ի հարկէ իր մեծ առաւելութիւնը՝ նիւթերի թարմութեան տեսակէտից։ Բառարանի խմբագրութեան մասնակցելու են բացի առաջին հրատարակութեան խմբագիրներ Կ. Կ. Արսենեվից, Ս. Ա. Վենգերովից, Ն. Կ. Կաբէեվից, պրոֆ. Շեվեակովից, Բաղլովից և նոր հրաւիրված ականաւոր ոյժեր, ինչպէս են՝ Կ. Կ. Կովալեվսկից, յունգէտ Զելինսկից, տնտեսագէտ պրոֆ. Ա. Պօսնեկով, իրաւաբան պրոֆ. Վ. Դ. Կուդրին-Կարավայեվ և ուրիշներ։

✦ Վերջերս բաւական նկատելի գրական ոյժ դարձած Վ. Դրօզդովը («Рус. Вѣд.» «գիւղացիական» բաժնի վարողը) ձեռնարկում է գալ տարվանից մի կիսամսեայ հրատարակութեան «Крестьянское Дѣло» անունով։ Հրատարակութիւնը նուիրված է տնտեսական գիւղացիութեան շահերի պաշտպանութեանը և անկուսակցական։ Աշխատակիցներ հրաւիրված են բաւականաչափ աչքի ընկնող գրողներ ու հրապարակախօսներ։ Տարեկան գինն է լինելու 2 ր.։ Հրատարակութեան տեղը՝ Մոսկվա (Долгоруковская д. № 85 кв. 11)։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դրուրիւնը Յունաստանում. — Յունական պարլամենտում նաւատորմի ապստամբութիւնը ամենևին չը քննվեց։ Պատգամաւորների ժողովը լուռ լսեց առաջին մինիստր Մավրօմիխալիսի կարճ յայտարարութիւնը, որն ասում էր թէ՝ շնորհիւ ցօրքի և նաւատորմի հայրենասիրութեան աջողվեց ճնշել ապստամբութիւնը։ Պարլամենտի կատարեալ անհասկանալի վերաբերմունքը դէպի մի այդպիսի խոշոր դէպքը յունական կեանքում, որպէս Տիպալդոսի ապստամբութիւնն է, այժմ շատ հեշտ է բացատրվում։ Բանը նրանումն է, որ զինուորական լիգան իմացում տուեց Թէօտօկիսի կուսակցութեան և պատգամաւորների ժողովի նախագահին, որ նա չէ ցանկանում, որ քննութեան ենթարկվի Տիպալդոսի ապստամբութիւնը պարլամենտում։ Եւ իր պահանջին ոյժ տալու համար երկու վաշտ զինուորներ մտցրեց պարլամենտի բակը, իսկ բերդապահ զօրքին հրամայեց կազմ և պատրաստ լինել զօրանոցներում։ Ի նկատի ունենալով այդ, պարլամենտին ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթէ ոչ ի տեղեկութիւն առնել առաջին մինիստրի կարճ յայտարարութիւնը։

Գաղափարի ընդդիմիններ Անգլիայում. — Վերջերս կատարվեցին ամեն տեղ Անգլիայում քաղաքային ընտրութիւնները։ Բոլոր քաղաքներում, բացի Լօնդօնից, վերանորոգվում էր միայն քաղաքային դումաների կազմի մի երրորդ մասը։ Ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցան խոշոր փոփոխութիւններ, բայց իւրաքանչիւր կուսակցութեան աջողութիւնները և կորուստները հաւասարակշռում էին միմեանց։ Մի փոքր աւելացաւ ձայնաւորների թիւը բանւորական կուսակցութիւնից։ Դաւառներում մի քիչ բարւոքեցին իրանց դրութիւնը ազատամիտները, իսկ Լօնդոնում— պահպանողականները։ Թէ դաւառներում և թէ Լօնդոնում շատ անսպասելի հետեւանքներ ստացվեցին։ պահպանողականները այնպէսին տեղեր գրաւեցին, որոնք համարվում էին առաջադէմ կուսակցութիւնների ամուր դիրքեր, բայց ազատամիտներն ևս ոչ պակաս անսպասելի նուաճումներ կատարեցին պահպանողականների հաշվին։ Ընտրված ձայնաւորների միջև գտնվում են և մի քանի կանայք, որոնք ընտրվել են որպէս թեկնածուներ զանազան կուսակցութիւններից։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
2 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացաւ 5, մեռնողներ չեղան. հիւանդ պառկած են 129 հոգի։

Մատակարարական յանձնաժողովը որոշեց 25,000 ր. յատկացնել Թերեքի շրջանի աղքատներին սերմացու և ուտելիքի համար։

Բարձր Գինզբուրգին թոյլատրվեց դումարել Վիլնայում գեկտ. սկիզբներում կանանց արհեստակցական դպրոցների ներկայացուցիչների համագումար։

Զինուորական խորհուրդը որոշեց թոյլատալ պահեստի օֆիցէրներին ինքնակամ վարձվել պաշտօնով ինտենդանտական վարչութեան մէջ։

Դատաստանական պալատը քննեց «Новое Время»-ի աշխատակից Ստօլիպինի գանգատը, որին Պետերբուրգի նահանգական դատարանը ենթարկել էր եօթ օրով բանտարկութեան և 100 ր. տուգանքի մամուլի միջով Բուլացելի հասցէին չարախօսելու և հայհոյելու համար։ Պալատը Ստօլիպինին արդարացրեց։

ՄՕՍԿՎԱ։ Երևան հանվեց գաղտնի գրքուածքներ, փամփուշտներ. ձերբակալվեցին չորս մարդ։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Սոսկալի փոթորիկ է և հեղեղ։

ԿԵՐՉ։ Գնացքը գալու ժամանակ կայարանում ձերբակալվեցին 4 հոգի, որոնք հոկտ. 31-ին Դենիչէվկում գրամատարից 20,000 ռուբլի կողոպտողներից են։

ՇԵՖԲՈՒՐԳ։ Պօրտուգալական թագաւորը անգլիական զբօսանաւով մեկնեց Անգլիա։ Զբօսանաւին ուղեկցում են ֆրանսիական և անգլիական զինուորական նաւեր։

ՊՕՐՏՍՄՈՒԹ։ Պօրտուգալական թագաւորը ժամանեց ցերեկով և ընդունվեց Ուէլսի պրինցից։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ։ Երէկ առաւօտեան ռումբ նետվեց ոստիկանապետ Ֆալկօնի վրա։ Ֆալկօնի կառքը ջարդվեց։ Ոստիկանապետը և նրա քարտուղարները ստացան մահացու վէրքեր և շուտով էլ մեռան։ Յանցաւորը, որ մի քսանամեայ պատանի է, ատրճանակով ծանր վիրաւորեց իրան գլխից։

### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Մելիքօպոլ, Վարդ. Պուռունսուզեանցին.— Մենք անկարող ենք որոնել Յով. Մալխասեանին և նրանից ստանալ 4 ր. ձեր բաժանորդագնի փոխարէն։ Խնդրեր դիմեցէք նրան։

Դիլիջան, ուսուցիչ Մ. Աւետիսեանին.— «Մշակի» № 233-ում տպված «Հարևան» ստորագրութեամբ յօդուածը դուք են ձեզ վերագրում։ Դուք երբէք մեր թղթակիցը չէք եղել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պoսաsաsար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդաsար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պoսաsաsար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդաsար պարանջ.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդաsար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պoսաsային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդաsար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պoսաsաsար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդաsար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաթում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդաsար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պoսաsային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդաsար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պoսաsաsար 6 ժամ 19 ր. առ., մարդաsար-ապրանքաsար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—42

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան ժ. 12½—2.
{ երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլոլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—26

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
{ երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—17

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»

գրավաճառանոցում վաճառվում են.

«Փոթորկից առաջ», Ա. Յովհաննիսեանի 1 ր.
«Կարմիր լուբեր բարեկամէս», Ա. Երճանեանի. . . 35 կ.
«Կատակերգութիւնք», Մոլիէրի, թարգ. Նուբարեանի. 2 հատոր 5 ր. 40 կ.
«Եվրեմվերդի—Երազահան», Մանդակունու, կազմած . 5 ր.
Օրացոյցներ ծոցի (բոլոր հրատարա-) 20 կ.
Օրացոյցներ պատի (կութիւններից) 50 կ.
Ռուսերէն օրացոյցներ, պատի և ծոցի սկսած . . 25 կ.
«Ազատարար շարժուն բանակին յաղթական մուտքը ի Պոլիս», պատկերազարդ լիակատար հաւաքածու Պոլսոյ դէպքերու պատմութեանց 1 ր. 50 կ.
«Աղբքսորը արձուներ», բժ. Խաթանեանի 10 կ.
«Ռուսահայ բառարան», Դաղբաշեանի 8 ր.
«Խեղճերը», Ահարոնեանի . 75 կ.
«Ռուսահայ բառարան». Յ. Թումանեանի 75 կ.
«Պատմութիւն պղնձէ քաղաքի», նոր տիպ . . 50 կ.
«Մանկական պարտէզ» իշխ. Արղութեանի 3 ր.
«Ուղղագրական բառգրքոյկ», Ա. Արեղեանի . . 30 կ.
«Հայոց նոր վկաները», Մանանդ. և Ա.հաս. . . 3 ր.
«Հայերէն նամակագրութեան ձևերը», Աղանեանի . . 60 կ.
«Պատմութիւն քաղաքակրթութեան», թարգմ. Նուպարեանի . 1 ր.
«Տնային բժշկարան», հրատ. բժ. Բաբեանի . . 2 ր. 60 կ.
«Մօլլա-Նասրէդինի առակներ և Հորոս», 30 կ.
«Կաթնատնտեսութիւն», թարգմ. Մխիթարեանի . . 50 կ.

Գրացուցակը ուղարկվում է ՁՐԻ։
(օ. մ.) 1191. 2—1

ԿՈՉ
Բացառիկ հանգամանքները ստիպում են Փոթու հայոց եկեղեցու շինութեան Հոգաբարձութեանս խնայողաբար գործել բոլոր բարեսէր և բարեգործ ազգայնոց՝ ըստ չափու կարողութեան և ցանկութեան օգնել Փոթու հայոց եկեղեցու շինութեան։ Ահա 10 տարի է, որ Փոթիում չը կայ ոչ միայն եկեղեցի, այլ և մի աղօթատուն, և տեղիս հայերը, աւելի քան 800 հոգի, գլխաւորապէս բանւորներ, իսպառ զրկված են հոգևոր ու բարոյական սնունդից։ Իսկ սրանց զաւակները՝ դպրոց չը լինելու պատճառով դէն էին շպրտված։ Հոգաբարձութիւնս իր ընտրված օրից ահա չորրորդ տարին է՝ չը խնայելով ոչ մի ջանք՝ աշխատում է ի կատար ածել իր ստանձնած գործը և հանդանակում է նուէրներ եկեղեցու և ուսումնարանի շինութեան համար։ Մեր դիմումը անուշադիր չը մնաց զգայուն և բարեսէր անձանց կողմից, որոնց նուիրաբերած գումարի մի մասով հոգաբարձութիւնս կառուցեց ուսումնարանի շինութիւնը, որը 1908 թուականի յունվարի 8-ից բացված է և ուր ուսանում են ձրի երկու սեռի հայ մանուկներ, իսկ մնացեալ գումարով ձեռնարկել է մի փոքր, համեստ եկեղեցու շինութեան, որի պատերը կէսից աւելի արդէն բարձրացված են. սակայն, դժբաղդաբար, վերջացու հանդանակած գումարը, իսկ անհրաժեշտութիւն է նկատվում մինչև ձմեռվայ վերջանալը բարձրացնել ամբողջովին պատերը և կամարները և ծածկել տանիքը, այլապէս տեղական կլիմայական անպատաս պայմաններից և ձմեռային մշտական անձրևներից կը փչանան բոլորովին եղածն էլ և դրա հետ միասին՝ թէ պատաւորական բարեգործ անձանց նուիրաբերութիւնը և թէ Հոգաբարձութեանս ամբողջ 4 տարվայ աշխատանքը։ Հոգաբարձութիւնս ոչ ֆիզիկական և ոչ էլ բարոյական ոյժ ունի անհանգստացնելու մինոյն բարեգործ և կարեկից անձանց, որոնք ձեռք մեկնելով՝ օգնութեան հասան այս մեծ գործում, ինչպիսին է ժողովրդի մութ խաւերի լուսաւորութիւնը եկեղեցու և ուսումնարանի միջոցով։ բայց կարիքը, դառն և անյետաձգելի կարիքը ստիպում է նորից ձեռք կարկառել և օգնութիւն հայցել։ Ովքարի մարդիկ, օգնեցէք վերջացնելու հայ ժողովրդի վերութեան և պարծանաց տաճարը։ Իւրաքանչիւր մի լումայ, իւրաքանչիւր մի կոպէկ խորին անկեղծութեամբ և շնորհակալութեամբ կընդունվի, որը և իր ժամանակին կը յայտարարվի կովկասեան լրագիրներում։ Խնդարհարաբ խնդրում ենք նուիրաբերութիւնները ուղարկել Փոթի՝ հայոց եկեղեցու Հոգաբարձութեան։

Նախագահ Հոգաբարձութեան՝
Անդրէաս Ապրէլեան
Գանձապահ և քարտուղար՝
Ա. Թիւրքեան
(չ.) 1108. 4—3

Շուտով լոյս կը տեսնի
Լ. Մանուէլեանի
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Տպվում է պրակներով։ I պրակի ծրագիրը.—Նախապատրաստական շրջան. 1) Հայերի դրութիւնը XIX դարի սկզբում, 2) Քաղաքակրթութեան նպաստաւոր պայմաններ, 3) Գրականութիւնը XIX դարի սկզբում և յետոյ. Ալամդարեան, Թաղիադեան, Աբովեան, 4) Լուսաւորութեան կենտրոններ, 5) Գրական նոր երևոյթներ, 6) Վերածնութեան նախօրեակին։
II պրակ.—Վերածնութիւն. 1) Մասուլ. Նազարեան և «Հիւսիսափայլ». «Կռունկ», 2) Նալբանդեան իբրև հրապարակախօս, քննադատ և բանաստեղծ, 3) Բանաստեղծներ՝ Պատկանեան, Շահազիզ, 4) Թատրոնի սկզբնաւորութիւնը և առաջին շրջանը. վարքագրական կօմեդիա և պատմական ողբերգութիւն. Սունդուկեան։
III և IV պրակները պարունակում են 70-ական թվականներից սկսած մինչև դարաւերջը։ Առ այժմ տպվում է I պրակը. հետզհետէ լոյս կը տեսնեն հետեւեալ պրակները։
I պրակի գինը 40 կ.։
Հասցէն՝ Александрополь.
(չ. ու.) 1198. 2—1

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այդին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի մըրգատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալոգը ուղարկվում է Ձ Ր Ի։
(չ. կ.) 1105. 15—5

7 ՐՈՒԲ. 25 ԿՕՊԷԿՈՎ
ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏ!
Տղամարդկանց եւ կանանց
Ձմերային կամ աշնանային զգեստների երկու կտոր, տղամարդկանց և կանանց համար, ճանապարհածախքը՝ պօստով՝ ձրի—7 ր. 25 կօպէկով։ (Սիբիր՝ ճանապարհածախք 85 կ.)։ Ձը հաւանած դէպքում փողը վերադարձվում է։ Տղամարդկանց կտորը 4¼ արշ.՝ Անգլիական տրիկօ, ամուր բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, և 8 արշ. տրիկօ՝ «Արկադիա», բրդից, մօդային նկարով, կանանց էլեգանտ զգեստի համար։ Երկու կտորն էլ ամեն տեսակ մութ գոյներով։ Վերադիր վճարով ուղարկվելուց՝ հաշվում է 16 կօպ. պօստային ծախք։ Ըստ ցանկութեան՝ նոյն գնով ուղարկվում է տղամարդկանց համար երկու կամ կանանց համար նոյնպէս երկու կտոր։ Հասցէագրել՝ Фабриканту М. Бернштейну, г. Лодзь. М. (չ.) (В.67939) 1145. 3—2

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!
2 ր. 75 կ.։
Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» չէվիոտը, 4¼ արշ., տղամարդկանց հագուստի համար։ Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշվին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО“, г. Лодзь, № 15.
Թղթակցութիւնները ռուսերէն լրզուով։
(չ.կ.) (В. 58110) 947. 0—13

→✦ ԼԱՄՊԱՆԵՐԻ ԵՒ ԱՄԱՆԵՂԷՆԻ ԴԷՊՕ ✦←
(Ներսիսովսկայա եւ Բարօնսկայա փող. անկիւն)
Դարչօ Եգօրովիչ Եգանեանի
Բիւրեղեայ, յախճապակեայ, ճենապակեայ, մետաղեայ ապրանքների, նոյնպէս և պղնձեայ, էմալեայ և մետաղեայ իրերի և խոհանոցային պատկանելիքների վաճառք։
ԻՆՔՆԱԵՌՆԵՐ ԱՄԵՆ ՁԵՒԻ
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
(չ. կ.) 1197. 2—1

ՓՈԽԱՏՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Վ. Լիսիցեան եւ Ընկ. Առեւտրական Տան
(Դվօրցօվայա փող. տ. վրաց ազնվականների)
Ամեն օր, առ. ժամը 9-ից մինչև 12-ը ցեր., զանազան արժէքներ ունեցող առարկաների գրաւականով տրվում է պարտադրամ։ Այդտեղ շարունակվում է փայերի համար ստորագրվելը։ (օ. մ.) 1199. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
30 ՄԵՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
Կսէնիեվսկայա փող. № 7, սեփ տ., «ՎԵՏՅԵԼ» հիւրանոցի մօտ։
✦ Տելեֆոն № 590 ✦
Հիւանդներին ընդունում են հետեւեալ մասնագէտ բժիշկները.
ԳԱՄԲԱՇԻՋԵ Վ. Դ.—ներքին եւ երեխ., ամեն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.։
ԴԵԳԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ հիեfsr., երկուշ., չորեքշ., ուրբաթ, 10½—11 ժ. առ.։
ԳՈՒՐԿՈ Ա. Գ.—ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամեն օր, բացի կիրակի օր., 2½—3½ ժ. ցեր.։
ՄԱՂԱԼՕՎ Գ. Գ.—ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.։
ՄԱՆՈՎԼԷՏՕՎ. Վ. Մ.—ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.։
ՄԵԼԻՔՕՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՄՈՒՍԱԷԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.։
ՓԻՐԱԴՕՎ Ր. Բ.—վիրաբուժ., ամեն օր՝ 11—12 ժ. առ.։
ՊՕՊՕՎ Բ. Ա.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.։
ՐՅԽԻԼԱՎԵՆ Ն.—ատամի, ամեն օր՝ 9—10 ժ.
ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամեն օր՝ 10—11 ժ. առ.։
ՏԻԿԱՆԱՎԵՆ Ի. Ե.—կանանց եւ մանկաբ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԿԻԿՕՎԵՆ Տ. Ս.—ներքին, երկուշաբ. և ուրբ. 9—10 ժ. առ.։
(չ. ու. կ.) 1017. 100—24

ՎՕԿԶԱԼՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
Երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնգիլհաճեանցի
Տելեֆոն 695
Ս. ՎԱՇԱԿՄԱՋԵ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
ԴԻԱՍԱՄԻՋԵ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, 11½—12½ ժ.
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ ամեն օր 12—1 ժ., բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և ականջի։
Հ. Ս. ՄԵՍԽԻԵՎ երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։
Ն. Գ. ՖԷՕԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., ներքին և երեխայոց հիւանդ.։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կօպէկ։ (չ. ու. կ.) 1032. 100—22

ԱՐԱՔՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱՋ“ ՀԻՐԱՆՈՑ
Երեւանեան հրապարակ, տ. Միրզոյեանի, տելեֆոն 358.
✦ ԹԻՖԼԻՍՈՒՄ ✦
Ընդարման մաքրութիւն անդրոութիւն և հանգստութիւն, էլեքտրական լուսաւորութիւն տելեֆոն և վանոնեներ։ 50 համարներ՝ 1 ռուբ. սկսած։ Քաղաքավարի և շուտափոյթ աշխատող ծառայողներ։
✦ Պ. պ. վօյաժօրներին և ամսով վարձողներին մեծ զեղչ ✦
ՄԵՆԻՈՒ։
I. ձաշ՝ 2 կերք.՝ 60 կ., 1 ր. օրվա և 1 ր. գինի։ II. ձաշ՝ 3 կերք.՝ 75 կ., 1 ր. օրվա, 1 ր. գինի, 1 թաս սուրճ։
III. ձաշ՝ 4 կերք. 1 ր., 1 ր. օրվա, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ձաշ՝ 5 կերք. 1 ր. 50 կ., 1 ր. օրվա, կէս շ. գ. և 1 թ. սուրճ
Յարգանքով՝ Ի. Կօրչիլայա և Ն. Սիխարուլիձե
(օ.մ.) 870. 100 29

200 ՐՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ

ով կապացուցի, թէ մեր ապրանք՝ չէ հանդապատասխանում գնին. 12 ր. տեղ 3 ր., 95 կ. ուղարկում ենք 17 անհրաժեշտ արժէքաւոր իր. 1) սև պոպլ. ժամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ առանց բանալի լարվող ժամ., 8 տարվայ երաշխաւոր. 2) գեղեցիկ, չը սեացող շղթայ. 3) նոյնպիսի ըրէլօկ. 4) զամչի պարկ, ժամ. խաւոր. 2) գեղեցիկ, չը սեացող շղթայ. 3) նոյնպիսի ըրէլօկ. 4) զամչի պարկ, ժամ. փչանալուց պահելու. 5) կաշուի նորաձև քսակ 6 բաժ. 6) շահաւէտ նորոյթ—ամենիկակ. անվտանգ «Սանիտաս» ածելի, որով ամեն ոք կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկելի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. դուրլէ մատանի «Օղալ» քարով. 11) Պարիզի նորոյթ «Պաստօզ», որը բնականօրէն ցոյց է տալիս գանապան տեսարաններ. 12—17) 6 հատ հետաքրքրաշարժ նկարներ «Պաստօզի» համար։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 դարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուց 5 պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոնպիսի գարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամաց. 4 ր. 50 կ. 2-ր 8 ր. 50 կ.։ Ցիշեալ զարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ր. թանգ. ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ) Հասցէն Т-во ЗАРЯ Варшава.
Խնդրում ենք հասցէն կարել և կպցնել ծրարի երեսին։
(В. 63520) 1019. 11—5